ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Թ. ԲԱԲԱՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Մայիսի 5-ին լրացավ Ա.ՐԱՔՍԻ ԲԱԲԱՅԱՆԻ ծննդյան 88-ամյակը:

Նա այլևս մեզ հետ չէ, դադարել է բաբախել գիտության մեծ մշակի սիրտը: 93-ի ցրտաշունչ ձմեռը խլեց Արաքսի Բաբայանի կյանքը, առաջին և դեռևս միակ կին ակադեմիկոսի, որն իր կյանքը նվիրել էր հայրենիքին, ժողովրդին և, իհարկե, քիմիային:

Ա. Բաբայանը 1928-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, իսկ հատուկ քիմիական կրթություն ստանալու համար՝ 1937-ին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը: Թեկնածուական և դոկտորական դիսերտացիաները պաշտպանել է համապատասխանաբար 1937 և 1945 թթ.: 1956-ին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից, և 1966-ին՝ իսկական անդամ: Ստեղծված օրվանից ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի ամինամիացությունների լաբորատորիան: Երկար տարիներ ղեկավարել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնը, դասավանդել է բժշկական, պոլիտեխնիկական ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում:

Քիմիան Ա. Բաբայանի տարերքն էր: Դեռ ուսանող տարիներին աշխատում էր համալսարանի և Հողժողկոմատի միացյալ լաբորատորիայում: Երկրորդ կուրսից պատրաստում էր Ուսուցչի՝ Ստեփան Ղամբարյանի ցուցադրական փորձերը: Ուսուցիչ, որը համարվում է Հայաստանում ժամանակակից քիմիայի հիմնադիրներից մեկը: Ա. Բաբայանը հավատարիմ մնաց Ուսուցչին, մուլտիպլիկ 37-ին, երբ «ժողովրդի թշնամին» ջնջվել էր իր շատ գործընկերների և աշակերտների հիշողությունից: Բազմիցս դիմեց բարձր ատյաններին ուսուցչի փրկության համար: Եվ Ղամբարյանը ետ վերադարձավ դժոխքից:

Ա. Բաբայանի հիմնական ուսումնասիրությունները նվիրված են ամինների և ամինամիացությունների քիմիային: Պետք է նշել, որ նրա առաջին աշխատանքները նվիրված են եղել ացետիլենային գլիկոլների քիմիային և հայտնի են գրականության մեջ որպես «Բաբայան—Ցավորսկու» ռեակցիա:

1953-ին հայտնաբերեց չորրորդային ամոնիումային աղերով կատալիզվող ալկիլման ռեակցիան, որը մեկ-երկու տասնամյակ հետո գրականության մեջ մտավ «միջֆազ կատալիզ» անվանումով: Հետաքրքիրն այն է, որ Բաբայանի ծառայությունը միջֆազ կատալիզի բնագավառում ավելի լայն է գնահատվում արտասահմանյան գիտնականների և հետազոտողների կողմից: Ցավոք, հետազոտությունները այդ բնագավառում դադարեցվեցին

50-ականների վերջին և վերսկսվեցին միայն 1977 թվից: Պատճառներից մեկը իր սիրելի «վերախմբավորման-ճեղքման» ռեակցիայի հայտնաբերումն էր, որին նվիրվեց ամբողջ էությամբ: Սկսվեց գիտնականի ամենաարգասաբեր ժամանակը: Պաշտպանվում էին թեկնածուականներ, դոկտորականներ, արտադրությունը ներդրում էր նրա հայտնագործությունները: Կուսակցությունը և կառավարությունը բարձր էին գնահատում ձեռքբերումները: Կոչումներ, պարգևներ, աստիճաններ, դեպուտատություն, հանդիպումներ, ելույթներ, շնորհավորանքներ: Ա. Բաբայանը այրվում էր, հրդեհելով շրջապատին: Այդ պահին նոր հայտնագործում՝ կատալիտիկ հիմքով և թերմիկ ներմոլեկուլյար ցիկլման ռեակցիա: Արդեն 60-ն անց էր, բայց աշխատում էր երիտասարդի ավյունով: Ամինների և ամինամիացությունների բնագավառի ծաղկեպսակը դարձավ մենագրությունը:

Անգնահատելի է Ա. Բաբայանի ծառայությունը հանրապետության գիտության և արտադրության կադրերի պատրաստման գործում: Ղեկավարել է 50-ից ավելի թեկնածուական և վեց դոկտորական դիսերտացիաներ: Հազարավոր ուսանողներ են լսել նրա բովանդակալից դասախոսությունները:

Հետաքրքիր մարդ էր Ա. Բաբայանը՝ մեծ աշխատասիրություն, հանրագիտական գիտելիքներ, փայլուն հիշողության տեր: Նրան բնորոշ էին բծախնդրությունը և մանրամասնությունը ամենում, լիներ դա գիտական, թե ուսանողական փորձ, դասախոսություն, թե պլենար զեկույց գիտաժողովում: Իսկ ինչ մանրակրկիտ էր քննարկում խնբագրություն ուղարկվող ցանկացած հոդված, նույնիսկ տեսողությունը իսպառ կորցրած, երբ նրա համար համբերատար կարդում էին հոդվածները, իսկ ինքը մտովին նկարում էր իրեն այդքան սիրելի ֆորմուլները: Աշակերտներին դաստիարակում էր ինքնուրույն մտածելու ունակությամբ, սիշտ հաշվի էր նստում ուրիշների հիմնավորած մտքերի հետ:

Կյանքը չէր սպանել նրա կանացիությունը, գիտության տատասկոտ ճամփին ունեցել էր 3 զավակ: Աշխատել է և բազմանդամ ընտանիք պահել:

Ա. Բաբայանը ոգևորված էր 88-ով: Ելույթ էր ունենում Ազատության հրապարակում, կոչ էր անում փրկել Արցախը: «Մանուկը պիտի իր մոր գրկում լինի»—եզրափակեց իր ելույթը: Կորցրած տեսողությունը և, մասամբ, լսողությունը, ողջ օրը գամված փոքրիկ ռադիոընդունիչին, հետևում էր Հայոց խորհրդարանի աշխատանքին:

Հին, լավ ժամանակներում կար հիանալի սովորույթ անցկացնել այս կամ այն գիտնականին նվիրված ընթերցումներ: Ա. Բաբայանը կազմակերպում էր «Ղամբարյանական ընթերցումներ»՝ հրավիրելով շատ և շատ գիտնականների: Հավանաբար այսուհետև կկազմակերպվեն «Բաբայանական...», դեռ շատ բան կա խոսելու և քննարկելու, չէ՞ որ մեծ ժառանգություն է թողել: